ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.** Անի Թաթոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Նիդերլանդներ, Հաագա, 2024 թվականի հոկտեմբերի 7-18:

4. **Հրավիրող կողմը.**

   Նիդերլանդների հելսինկյան կոմիտե:

5. **Գործուղման նպատակը.**

   Մատրա Իրավունքի գերակայության վերապատրաստման ծրագրի նպատակն էր զարգացնել մասնակիցների կարողությունները մարդու իրավունքների պաշտպանության և դրա հետ կապված ընթացակարգերի և իրավական դաշտի բարեփոխումների ոլորտում: Ծրագիրն անդրադարձել է տարբեր երկրների փորձառություններին և մեխանիզմներին՝ ուղղված միջազգային մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների արդյունավետ կիրառմանը, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների իրականացման խնդիրներին:

6. **Քննարկված թեմաները.**

1. Մարդու իրավունքների հիմունքներ և միջազգային ստանդարտներ.

- Մարդու իրավունքների հիմնահարցերի ուսումնասիրություն և դրանց կարևորության վերհանումը միջազգային իրավական շրջանակում:
- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փորձի փոխանակում:
- Տարբեր երկրների փորձառությունների քննարկում մարդու իրավունքների ոլորտում:

2. Մարդու իրավունքներն ազգային և միջազգային համատեքստում

Թեմաները ներառում էին, թե ինչպես են միջազգային մարդու իրավունքների ստանդարտները ներգործում կառավարության քաղաքականության և գործելակերպի վրա:

- Խորացվեցին գիտելիքները Նիդերլանդների մարդու իրավունքների հաստատությունների մասին, ինչպես նաև քննարկվեց ԵՄ Հիմնական իրավունքների խարտիան:
- Առանձին ուշադրություն դարձվեց ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների բարձրագույն հանձնակատարի աշխատանքի մեթոդաբանությանը:

3. Տեղական կառույցներ և մարդու իրավունքներ.

- Մանրամասնվեց մարդու իրավունքների միջազգային ստանդարտների ազդեցությունը տեղական քաղաքականությունների վրա:
- Քննարկվեց օմբուդսմենի դերը և տեղական մակարդակում մարդու իրավունքների մատչելիությունը հասարակության համար:
- Քննարկվեց նաև Նիդերլանդների «Ֆեմինիստական արտաքին քաղաքականության» հայեցակարգը և դրա կիրառումը:

4. Կառավարություն և քաղաքացիական հասարակություն

- Քննարկվեցին, թե ինչպես է քաղաքացիական հասարակությունը համագործակցում պետական կառույցների հետ, միաժամանակ պահելով քննադատական մոտեցումը:
- Քննարկվեց ռազմավարական դատավարությունների ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության վրա քաղաքացիական հասարակության մակարդակում:
- Թեմատիկ ուսումնասիրության ընթացքում անդրադարձ կատարվեց նաև բողոքի իրավունքի քաղաքականությանը:

5. Օմբուդսմենի դերը և քաղաքացիական տարածքի կրճատումը.

Օմբուդսմենի մեխանիզմների և նրա ազդեցության ուսումնասիրությունը կառավարության վրա:

- Քննարկվեցին քաղաքացիական հասարակության ազատությունների սահմանափակման փուլերը և դրանց ազդեցությունը մարդու իրավունքների վրա:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

1. **Էրիկ Վեստրատե** - Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների թեմաների վերաբերյալ ելույթ:
    - Էրիկ Վեստրատեն ներկայացրեց մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը միջազգային իրավունքի շրջանակում: Նա խոսեց իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության և միջազգային համագործակցության մասին, ընդգծելով Նիդերլանդների հանձնառությունն այս ոլորտում:
2. **Յոերի Բյուրեր Տավանիեր** - Նիդերլանդների Հելսինկյան կոմիտեի ներկայացուցչություն:
    - Յոերի Բյուրեր Տավանիերը ներկայացրեց Հելսինկյան կոմիտեի աշխատանքը մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում: Նա համակարծիք է, որ միջազգային փորձի փոխանակումն ու համագործակցությունը կարևոր են մարդու իրավունքների ոլորտում արդյունավետ քաղաքականության մշակման համար:
3. **Ժերֆի Ուզման** - Ամստերդամի համալսարանի ներկայացուցիչ:
    - Ժերֆի Ուզման խոսեց միջազգային մարդասիրական իրավունքի ստանդարտների մասին և դրանց կիրառման անհրաժեշտության մասին: Նա նաև քննարկեց, թե ինչպես են այդ ստանդարտներն անդրադառնում կառավարության քաղաքականություններին և հասարակական ծառայություններին:

4. **Քվիրին Էյկման** - Ուտրեխտի կիրառական գիտությունների համալսարանի պրոֆեսոր:
    - Քվիրին Էյկման իր ելույթում անդրադարձավ Նիդերլանդներում մարդու իրավունքների ենթակառուցվածքների և պատասխանատվության ոլորտներին: Նա մանրամասնեց, թե ինչպես են այս կառույցները համագործակցում և ինչ դեր ունեն մարդու իրավունքների պաշտպանության գործում:
5. **Յասպեր Կրոմմենդիկ** - Ռադբուդի համալսարանի պրոֆեսոր:
    - Յասպեր Կրոմմենդիկը ներկայացրեց Եվրոպական Միության Մարդու իրավունքների քաղաքականության շրջանակները: Նա քննարկեց, թե ինչպես են Եվրամիության անդամ երկրների ազգային օրենսդրությունները և քաղաքականությունները համապատասխանում եվրոպական ստանդարտներին:
6. **Վիմ Գիրտս** - Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների դեսպան:
    - Վիմ Գիրտս խոսեց տեղական օմբուդսմենի աշխատանքի մասին, ընդգծելով դրա կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանությունում: Նա նաև ներկայացրեց, թե ինչպես օմբուդսմենները կարող են հեշտացնել քաղաքացիների մուտքն իրավական համակարգ:
7. **Ադդի Ստեհաուեր** - Հաագայի նախկին օմբուդսմեն:
    - Ադդի Ստեհաուերը խոսեց հասարակության մեջ մարդկանց հեշտ մուտքի ապահովման անհրաժեշտության մասին, ընդգծելով, թե ինչպես կարող են օմբուդսմենները դեր խաղալ այս գործընթացում՝ ի նպաստ քաղաքացիների իրավունքների:
8. **Հեսթեր վան Օմմերեն** - Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ:

- Հեսթեր վան Օմմերենն անդրադարձավ ֆեմինիստական արտաքին քաղաքականության կոնցեպտին, ներկայացնելով, թե ինչպես կարող է այս մոտեցումը նպաստել մարդու իրավունքների պաշտպանության գործին:

9. **Էմի վան Գենիպ** - Ռոտերդամի համայնքի ներկայացուցիչ:
    - Էմի վան Գենիպը մասնակցեց «Ներառականություն» թեմայով պանելին, որտեղ խոսեց կառավարության կազմակերպություններում փոփոխությունների անցկացման մասին, ընդգծելով համագործակցության և բոլոր քաղաքացիների ձայնը լսելու կարևորությունը:
10. **Ժայր Շալկվեյկ** – «Ուղղակի վերահսկում» (Controle, Alt, Delete) կազմակերպության ներկայացուցիչ:
    - Ժայր Շալկվեյկը ներկայացրեց, թե ինչպես քաղաքացիական հասարակությունը կարող է համագործակցել կառավարության հետ, միաժամանակ քննադատելով դրանց աշխատանքը՝ մարդու իրավունքների պաշտպանության նպատակի համար:
11. **Մերել Հենդրիքս** – «Հանրային շահերի դատավարական նախագիծ» (PILP) կազմակերպության ներկայացուցիչ:
    - Մերել Հենդրիքսը ներկայացրեց ռազմավարական դատական գործերը քաղաքացիական հասարակության աշխատանքի մեջ՝ ներկայացնելով, թե ինչպես կարող են կազմակերպություններն արդյունավետորեն պայքարել մարդու իրավունքների համար:
12. **Կրիս վան դե Պաս** - Տիլբուրգի համալսարանի պրոֆեսոր:
    - Կրիս վան դե Պասը խոսեց քաղաքացիական իրավունքների, հատկապես՝ բողոքելու իրավունքի մասին, նշելով, թե ինչպես է դա կարևոր սոցիալական փոփոխությունների համար:
13. **Տակո Տեմմինկ Թուինստրա** - Ամստերդամի համայնքի ներկայացուցիչ:

- Տակո Տեմմինկ Թուինստրան ներկայացրեց բողոքելու իրավունքի քաղաքականության հարցերը, նշելով, թե ինչպիսի մարտահրավերներ կարող են առաջանալ այդ իրավունքի պաշտպանությունում:

14. **Յան Պրինս** - Ազգային օմբուդսմեն:
    - Յան Պրինսը մանրամասնեց օմբուդսմենի բողոքների մեխանիզմները և ազդեցությունը կառավարության քաղաքականությունների վրա, ընդգծելով օմբուդսմենի դերը հասարակության մեջ:
15. **Էզստեր Հարտայ** - «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) կազմակերպության ներկայացուցիչ:
    - Էզստեր Հարտայն անդրադարձավ Եվրոպական մարդու իրավունքների կոնվենցիային և քաղաքացիական տարածքի կրճատման թեմաներին, նշելով, թե ինչպես են այդ գործընթացներն ազդում մարդկանց իրավունքների վրա:

Բելգիայի այցի ընթացքում հանդիպումների մասին.

1. **Կատարինա Վիեյրա** - Եվրոպական խորհրդարանի պատգամավոր:
    - Կատարինա Վիեյրան մասնակցեց Եվրոպական խորհրդարանի նիստերին, որտեղ քննարկվեցին մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերը: Նա ներկայացրեց իր աշխատանքները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում և անդրադարձավ այն մարտահրավերներին, որոնց կարող են հանդիպել քաղաքական գործիչներն այս ոլորտում:

Այս հանդիպումների ընթացքում մոդերատորներն ու խոսնակները, մասնակցելով ակտիվ քննարկումների, նպաստեցին մասնակիցների գիտելիքների և փորձի զարգացմանը մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարության ոլորտում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ծրագրի ավարտին յուրաքանչյուր երկրի թիմ ներկայացրեց գործողությունների ծրագիր: Հայաստանի թիմի կողմից ստեղծվել և ներկայացվել է գործողությունների ծրագիր, որը լրամշակվեց Հաագայում՝ ծրագրի ընթացքում:

Վերոնշյալ ծրագիրն ոչ միայն արձանագրում է ՀՀ-ում խտրականության դեմ պայքարի ուղղությամբ անհրաժեշտ քայլերը, այլ նաև նշում է, թե ինչպես պետք է դրանք իրականացնել՝ ընդգրկելով ակտիվ մասնակցություն պետական մարմինների, հանրության և միջազգային փորձագետների կողմից:

Այն միավորում է Հայաստանում առկա մարտահրավերները և հնարավորությունները, նպատակ ունենալով ապահովել արդյունավետ օրենսդրական լուծումներ, որոնք կպաշտպանեն յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները և կպայքարեն խտրականության դեմ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

24.10.2024թ.